

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ (eirēnē) [ՆԿ]
SPECIAL TOPIC: PEACE (eirēnē) [NT]

Հունարեն այս տերմինը վերաբերում էր ընդհարման բացակայությանը, սակայն LXX թարգմանության մեջ այն սկսեց նշանակել ներքին խաղաղություն Աստծո հետ և մարդը մարդու հետ (այսինքն՝ Ղուկ. 2:14, 10:6): ՆԿ-ը ՀԿ-ի պես կիրառում է այն որպես ողջույնի ձև՝ «Խաղաղություն ձեզ» (այսինքն՝ Ղուկ. 10:5, Հովհ. 20:19,21,26, Հռոմ. 1:7, Գաղ. 1:3) կամ «հաջողություն, գնաք խաղաղությամբ» (տես՝ Մարկ. 5:34, Ղուկ. 2:29, 7:50, 8:48, Հակ. 2:16):

Հունարեն այս տերմինը կիրառվում է «խաթարված փոխհարաբերություններն իրան կապելու» իմաստով (այսինքն՝ Հռոմ. 5:10-11): ՆԿ-ը խաղաղության մասին երեք հիմնական աստվածաբանական իմաստով է խոսում՝

1. օբյեկտիվ կողմը՝ մեր խաղաղությունն Աստծո հետ՝ Քրիստոսի միջոցով (տես՝ Հռոմ. 5:1, Կոդ. 1:20)
2. սուբյեկտիվ կողմը՝ Աստծո հետ մեր շիտակ լինելը (տես՝ Հովհ. 14:27, 16:33, Փիլ. 4:7)
3. այն, որ Աստված Քրիստոսի միջոցով մեկ մարմնի մեջ է միավորել հավատացյալ հրեային, և հեթանոսին (տես՝ Եփես. 2:14-17, Կոդ. 3:15): Քանի որ մենք Աստծո հետ խաղաղություն ունենք, ապա արդյունքը պետք է լինի ուրիշների հետ էլ խաղաղությունը: Ուղղահայացը պետք է դառնա հորիզոնական:

Նյումեն և Նիդա *Թարգմանչի ձեռնարկ Հռոմեացիներին ուղղված Պողոսի Նամակի համար*, էջ՝ 92, գրքում մի հետաքրքիր մեկնություն կա «խաղաղության» վերաբերյալ .

«Թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանում խաղաղություն տերմինն ունի իմաստային լայն սպեկտր: Հիմնականում այն նկարագրում է մարդու կյանքի ընդհանուր բարեկեցությունը. այն նույնիսկ որդեգրվել է հրեաների մեջ որպես ողջույնի ձև (*shalom*): Այս տերմինն ունի այնքան խորը իմաստ, որ նույնիսկ հրեան կարող է այն կիրառել Մեսիական փրկությունը նկարագրելու համար: Հաշվի առնելով այս փաստը, լինում են ժամանակներ, երբ այն կիրառվում է գրեթե որպես «Աստծո հետ ճիշտ փոխհարաբերության մեջ լինելու» արտահայտության հոմանիշ: Այստեղ այս տերմինը կիրառվել է որպես մարդու և Աստծո միջև հաստատված ներդաշնակ փոխհարաբերության նկարագրություն, համաձայն այն հիմքի, որ Աստված է մարդուն Իր հանդեպ ճիշտ դիրքի վրա դրել» (էջ՝ 92):